«ԹԵՐԹ ԷՅ ԷՄ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, 0054, Չարենցի 1
+374 (60) 528 528 editor@tert.am

ԹԵՐԹ.am
tert.am

"Tert am" Ltd.
RA, Yerevan, 0054, Charents 1
+374 (60) 528 528 editor@tert.am

Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանին

# Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան, ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

Խնդրում եմ ներկայացնել 2019 թ.-ի 12 ամիսների ընթացքում տրված պարգևավճարները՝ ըստ պաշտոնների բաշխվածության: Ներկայացնել հաստիքների համար նախատեսված պարգևավճարները, անձնական տվյալներ չեմ պահանջում:

1 – Որքա՞ն պարգևավճար է ստացել մարզպետը, մարզպետի տեղակալը, մարզպետի խորհրդականը, մարզպետի օգնականը, մարզպետի մամուլի քարտուղարը, գլխավոր քարտուղարը, վարչության պետերը, բաժնի պետերը, ավագ և կրտսեր մասնագետները: Ներկայացնել մարզպետարանի բոլոր պաշտոնյաների և աշխատակիցների պարգևավճարների չափերը:

2 – Բացի պարգևավճարի դրամային արժեքով նշումից, խնդրում եմ նաև հայտնել, թե պարգևավճարը տվյալ պաշտոնյայի, աշխատակցի աշխատավարձի քանի տոկոսի չափով է եղել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն

Tert.am կայքի լրագրող Հակոբ Ասլանյան

(հեռ. 098450366, էլ.փոստ aslanyanh93@gmail.com )

26.02.2020 թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 1514
27 02 2020